# ԶԼՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ
# ԵՎ ԴԵՐԸ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶԱՐՇԱՎՈՒՄ

ԽԱՌԱՏՅԱՆ Լ. Ա.

*Ժողովրդավարական պետությունների քաղաքական-իրավական համակարգի հիմքում ընկած են ազատ, արդար և թափանցիկ ընտրությունները՝ որպես սահմանադրական կարգի հիմնական բաղկացուցիչ տարր: Ժողովրդավարական ընտրական գործընթացի թափանցիկությունն ու հրապարակայնությունն ապահովելու գործում կարևոր և պարտադիր պայման է ԶԼՄ աշխատանքի գործունեության կազմակերպումը, որն արտահայտվում է հիմնականում տեղեկատվության ապահովման և հասարակական վերահսկողության գործառույթի իրականացման մեջ: Հայտնի է, որ ընտրական գործընթացները բաղկացած են հաջորդական ժամանակահատվածներից, որոնց մեջ առանձնանում է նախընտրական քարոզարշավը՝ որպես ընտրությունների կազմակերպման և անցկացման սկզբնական և պատասխանատու փուլ: Այս փուլում հանրությանը օբյեկտիվ և հավաստի տեղեկություններ տրամադրելու տեսակետից կարևորվում է ԶԼՄ աշխատանքը, որի հիմքում ընկած են օրենսդրական համակարգի համապատասխան դրույթներում առկա հակասությունների վերհանումը, պարզաբանումը և լուծումը: Նոր ՀՀ ընտրական օրենսգրքում (2011 թ. մայիս) բավականաչափ ընդլայնվել են ԶԼՄ և ԶԼՄ ներկայացուցիչների իրավունքները, մասնավորապես ԶԼՄ-ին իրավունք է վերապահվել ներկա լինելու և մասնակցելու ընտրական գործընթացի բոլոր փուլերին, իրականացնելու մշտադիտարկման ամբողջական գործառույթը՝ ընդհուպ ընտրությունների ավարտից հետո ընտրատեղամասերում ձայների վերջնահաշվարկը: Այս առումով Ընտրական օրենսգրքով սահմանված են երաշխիքներ, որոնք բացառում են լրագրողական աշխատանքի խոչընդոտները, իսկ թե ինչ կլինի գործնականում՝ ցույց կտան ընտրությունները: Ինչպես և ինչ չափանիշներով պետք է ղեկավարվեն ԶԼՄ-ները, որ նրանց գործունեությունը իրականացվի օրենքին համապատասխան, և լրատվամիջոցներն ունենան զգալի կշիռ, կարողանան հարգանք և վստահություն վայելել թե՛ թեկնածուների և կուսակցությունների և թե՛ ընտրազանգվածի շրջանում:*

*Այսպես, Ռուսաստանի Դաշնության Հեռարձակողների ազգային ասոցիացիան արձանագրել է, որ ընտրական գործընթացում հեռուստատեսության գլխավոր խնդիրն է իր գործառույթները ծառայեցնել բացառապես ընտրողների և ոչ թե քաղաքական գործիչների և կուսակցությունների շահերին*[1]*: Այս սկզբունքը վերաբերում է լրատվամիջոցների բոլոր տեսակներին, և որին համամիտ են նաև իշխանության մարմինների ներկայացուցիչները: Սակայն, միևնույն ժամանակ,*

---

[1] *Տե՛ս Меморандум Национальной ассоциации телерадиовещателей России (Законодательство и практика СМИ, 1995, N 11, с. 21):*

նշված դրույթը կարող է հասցնել միմյանցից տարբերվող և նույնիսկ հակասող եզրահանգումների: Հարց է ծագում՝ ինչպիսին է ԶԼՄ ամենօրյա գործունեությունը, և երկրորդ՝ արդյո՞ք գործ ունենք այնպիսի ընտրությունների հետ, որոնց նկատմամբ անհրաժեշտ է կիրառել իրավական կարգավորման հստակ ընթացակարգ: Այս առումով առկա են տարբեր մոտեցումներ: Որոշ հետազոտողների կարծիքով ԶԼՄ ներկայացուցչի, լրագրողի համար շատ կարևոր է գիտակցել նախընտրական քարոզարշավի և խոսքի ազատության միջև եղած որոշակի նմանությունները և տարբերությունները՝ դրանք հստակ տարանջատելու համար: Նրանց համոզմամբ, ԶԼՄ-ի ազատության դրսևորումը, որը պայմանավորված է ընտրողների իրազեկման օբյեկտիվ անհրաժեշտությամբ, ընտրական գործընթացում պետք է որոշակիորեն սահմանափակվի: Ճիշտ հակառակ տեսակետն են արտահայտում այս խնդրի հետազոտությամբ զբաղվող այլ գիտնականներ. ըստ այդմ, ԶԼՄ գործառույթի սահմանափակումն ընտրողին հնարավորություն կընձեռի անհատապես «շփվելու» թեկնածուների հետ, որը դրական նշանակություն կունենա թեկնածուների համար, ինչի հետևանքով նրանք ընտրողներին կներկայացվեն սուբյեկտիվորեն և իրենց համար նպաստավոր պայմաններով: Ըստ այս հայեցակարգի՝ ընտրողների օբյեկտիվ իրազեկմանը և արդար ընտրությունների ապահովմանը հասնելու համար զանգվածային լրատվամիջոցների սահմանափակումները ընտրական գործընթացում պետք է հասցվեն նվազագույնի: Սակայն որպես հիմք ընդունել որևէ տեսակետ, մեր կարծիքով, ճիշտ չէ, քանի որ ընտրական գործընթացում ԶԼՄ գործառույթում մի հայտնի չափով սահմանափակումներ կամ արգելքներ չեն կարող չլինել: Իհարկե, սահմանափակումներն անհրաժեշտ են, սակայն պայմանով, որ երկու արժեքներից ոչ մեկը՝ խոսքի ազատությունը և ազատ ընտրությունները, չխախտվեն և չոտնահարվեն: Նախընտրական քարոզարշավի փուլում ԶԼՄ դերը ճիշտ պատկերացնելու և գնահատելու համար կարևոր են հետևյալ պահանջները.

ա) հետազոտել օրենսդրական նորմատիվ հենքի և ընտրությունների տեղեկատվության ապահովման հիմնական սկզբունքները.

բ) վերլուծել ԶԼՄ կազմակերպությունների աշխատանքի և ԶԼՄ-ների միջոցով ընտրողներին իրազեկելու գործառույթը.

գ) պարզաբանել տեղեկատվություն և քարոզչություն հասկացությունների տարբերությունները.

դ) վերհանել և գնահատել նախընտրական քարոզչության և քարոզչության փուլի անցկացման առանձնահատկությունները.

ե) իրականացնել ԶԼՄ-ների նախընտրական քարոզչության գործառույթը.

զ) ԶԼՄ կազմակերպությունների պատասխանատվության խնդիրը.

է) ԶԼՄ՝ հեռուստառադիոհեռարձակման հաստատությունների, պարբերական տպագիր հրատարակությունների թողարկման, ինչպես նաև էլեկտրոնային լրատվամիջոցի առանձնահատկությունների վերլուծությունն ընտրական գործընթացում:

*Փորձենք ներկայացնել ԶԼՄ աշխատանքի բնույթի առանձնահատկությունները և հատկանիշները, որոնցով առաջնորդվում են ԶԼՄ-ները և նպաստում նախընտրական քարոզարշավի օրինականության ապահովմանը:*

*Ժողովրդավարական երկրներում ընտրությունների լուսաբանման գործընթացը ներառում է հանրությանը հավաստի և օբյեկտիվ տեղեկատվություն ներկայացնելը, ինչպես նաև քաղաքական կուսակցությունների և թեկնածուների փոխհարաբերությունների իրական պատկերի հրապարակային անդրադարձը: Այդ նպատակով հեռարձակման կազմակերպությունների և տպագիր հրատարակու-թյունների խմբագրությունների պարտավորությունների մեջ է մտնում ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ ընտրական օրենսգրքով, ՀՀ ԶԼՄ-ների մասին օրենքով, ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքով, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումներով և ենթաօրենսդրական ու իրավական ակտերով ղեկա-վարվելը: Տեղեկատվության ապահովում նշանակում է ընտրողների իրազեկում, ընտրությունների անցկացման կարգի մասին տեղեկատվության տրամադրում, նախընտրական քարոզչություն, քաղաքացիների ազատ կամքի արտահայտության ու ընտրությունների հրապարակայնություն: Ինչ վերաբերում է ԶԼՄ-ների գործու-նեության բնույթին, ապա վերջիններս իրենց ծրագրերը պատրաստելիս պետք է ազատ լինեն կառավարության ներկայացուցիչների, քա-ղաքական կուսակցությունների կամ առանձին թեկնածուների միջամտությունից[2]: Պետք է նշել, որ ազգային լրատվամիջոցների կողմից ընտրությունների լուսաբանումը զգալիորեն տարբերվում է ինչպես զարգացած, այնպես էլ երիտասարդ ժողովրդավարական երկրների ընտրությունների լուսաբանումից: Որքան բազմազան են երկրների սահմանադրական համակարգերը, այնքան տարբեր են զանգվածային լրատվամիջոցները: Ոչ մի երկրում ընտրությունների լուսաբանման փորձը և միջոցները չի կարելի ընդունել որպես հիմք մեկ այլ երկրում ընտրական միջոցների կիրառման համար: Եթե ընտրությունների լուսաբանման գործընթացը չի համապատասխանում երկրում համապատասխան քաղաքական իրադրությանը, ապա այն կորցնում է իր նշանակությունը: Զանգվածային լրատվամիջոցների՝ ընտրությունների բազմակողմանի և խոր լուսաբանման գործում առանձնապես կարևորվում են պետությունների քաղաքական համակարգերը և դրանց զարգացումը: Այսպես, Ուկրաինայում 1994 թ. ընտրություններին մասնակցել էին ոչ բավականաչափ քաղաքականացված թեկնածուներ, որի հետևանքով ԶԼՄ-ների լու-սաբանման ապահովման գործառույթը հասցվել էր նվազագույնի[3]:*

*Յուրաքանչյուր ընտրական գործընթացի մասնակցելու համար բոլոր սուբյեկտներին տրամադրվում է անհրաժեշտ տեղեկատվություն քվեարկության կարգի և ժամկետների անցկացման, թեկնածուների, ընտրական միավորումների,*

---

[2] **Mickewisz E., Firestone C.** *Television and Elections-Aspen Institute and the Carter Centre of Emory University, 1992, pp. 4 (translated into Armenian, Yerevan, 1994).*

[3] *Լրատվամիջոցները և ընտրությունները, Երևանի մամուլի ակումբ, 1997, էջ 8:*

*ընտրական դաշինքների, ընտրարշավի գործընթացի և այլնի մասին: Հետևաբար, զանգվածային լրատվամիջոցները արդար ժողովրդավարական ընտրությունների անցկացման մեխանիզմի անհրաժեշտ հատկանիշ են, որոնք «առանց ԶԼՄ-ների ազատության կարող են ընկալվել զուտ որպես իմաստազուրկ բառակապակցություն»[4]: Մյուս կողմից հնարավոր չի լինի ապահովել քաղաքացիների՝ տեղեկատվություն ստանալու և տարածելու սահմանադրական սկզբունքի իրացումը (ընտրությունների ոլորտում)՝ առանց լրատվամիջոցների գործունեության պետական կարգավորման, որը նախատեսվում է գործող օրենսդրությամբ:*

*Տարբեր երկրների ընտրությունների մասին օրենսդրությունները տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցների գործունեությունը կանոնակարգում են տարբեր չափերով՝ տեղեկատվության տարածման ոլորտում սահմանելով որոշակի սահմանափակումներ: Այսպես, օրենսդրի կողմից ընտրարշավների փուլում թեկնածուների տեղեկատվական հնարավորությունների հավասարեցման ապահովման համար սահմանվում են համապատասխան երաշխիքներ, որոնց հիմքը ՀՀ Սահմանադրության դրույթներն են, և որոնք երաշխավորում են քաղաքացիների իրավունքների հավասարությունը անկախ սեռից, ռասայից, գույքային կամ այլ պատկանելությունից: Ընտրությունների գործընթացում նկատելի է դառնում քաղաքական դիմակայության օբյեկտիվ պատկերը, որից ելնելով՝ ընտրողը հնարավո- րություն է ունենում ինքնուրույն ընտրություն կատարելու տարբեր թեկնածուների, քաղաքական կուսակցությունների, ընտրական միավորումների և ընտրական դաշինքների միջև: Պետության խնդիրն է ամբողջապես նպաստել սահմանադրական այս սկզբունքների իրագործմանը: Տեղին է հիշատակել Ե. Վ. Մամոնտովայի տեսակետն այն մասին, որ «կարևոր է զանգվածային լրատվամիջոցներով օրենսդրորեն սահմանել նախընտրական քա- ոզարշավի պայմանները և ապահովել դրանց անարգել իրականացումն ընտրական գործընթացի մասնակիցների կողմից»[5]:*

*Խնդրի լուծումն ապահովում է ընտրարշավի անցկացման փուլում ընտրությունների հետ կապված տեղեկատվության տարածման իրավական կարգավորումը: Պետք է հաշվի առնել, որ «ընտրարշավ» և «ընտրական գործընթաց» հասկացությունները տարբերվում են նրանով, որ որևէ ընտրարշավ խստագույնս սահմանափակված է ընտրությունների մասին օրենսդրությամբ նախատեսված ժամանակավոր շրջանակներով: Ընտրական գործընթացը նշանակում է «ընտրական օրենսդրությամբ կանոնակարգված ընտրությունների անցկացման և*

---

[4] **Карвер Р.** *и др. Организация и финансирование выборов (ACE Project). СМИ и выборы. Путеводитель по избирательной системе России: Сб.М. ИРИС, 2001, электронная версия (CD).*

[5] **Мамонтова Е. В.** *Некоторые вопросы обеспечения информационных гарантий избирательных прав граждан Российской Федерации. Политический менеджмент; электоральный процесс и технологии, СПб., 1999, с. 172.*

*կազմակերպման միջոցով իշխանության փոխանցման և ձեռքբերման նպատակով ընտրական իրավունքի սուբյեկտների գործունեություն»[6]:*

*Ընտրական գործընթացի շրջանակում իրականացվում են ընտրություններին առնչվող բազմապիսի գործառույթներ, ինչպես նաև իրականացվում են աշխատանքներ նրանց իրավագիտակցության բարձրացման ուղղությամբ, ընտրական հանձնաժողովները հրապարակում են պատգամավորների գործունեության կազմակերպման և ընտրությունների անցկացման ծախսերի վերաբերյալ հաշվետվություններ:*

*Ընտրական գործընթացի՝ «օրենսդրությամբ կանոնակարգված ընտրությունների կազմակերպում և անցկացում» ձևակերպմանը համամիտ են որոշ գիտնականներ: Այսպես, Վ. Իգնատենկոյի կարծիքով ընտրական գործընթացը բաղկացած է հարաբերականորեն ինքնուրույն փուլերից, որոնցից յուրաքանչյուրն «ընտրական իրավունքների իրացումն ու ընտրությունների օրինականությունն ապահովող ընտրական գործողությունների և ընտրական գործառույթների կազմակերպված համակցություն է: Ընտրական գործընթացը հիմնված է օրինականության սկզբունքների վրա՝ ընտրողների իրավունքների հավասարության, հրապարակայնության, ընտրական միջոցառումների իրականացման անընդհատության, ընտրական գործողությունների իրականացման և ընտրությունների արդյունքների որոշման փաստաթղթային կարգավորման հիման վրա»[7]: Մյուս կողմից, ընտրական գործընթացը, ըստ Յու. Վեդենեևի, «փոխադարձ հարաբերությունների պարզաբանման նպատակով պետության և հասարակության, քաղաքացու և իշխանության յուրօրինակ հանրային հանդիպում է, ընդսմին՝ իրական փաստերի և իրադարձությունների մասին կողմերին պատշաճ իրազեկելու նպատակով»[8]:*

*Քանի որ զանգվածային լրատվամիջոցների հիմնական և կարևոր դերը ի հայտ է գալիս նախընտրական քարոզարշավի փուլում, հույժ կարևորվում է ԶԼՄ-ների համապատասխան գործառույթն այդ շրջանակում: Սակայն, լրատվամիջոցների գործունեության և օգտագործման հետ կապված, առաջանում են բազմաթիվ հարցեր: Ճիշտ է, ՀՀ ընտրական օրենսդրությունը, սկսած 1990-ական թվականներից, ենթարկվել է բազմաթիվ փոփոխությունների, սակայն մինչև օրս դրանում առկա են հակասություններ, որոնք «գործում են» հոգուտ քաղաքագետների և լրագրողների: Օրենսդրական այս անկատարությունները օգտագործվեցին մրցակիցների դեմ պայքարում՝ կիրառելով քաղաքական տեխնոլոգիաներ և մրցակցին «սևացնելու» հնարքներ:*

*Ներթափանցելով հասարակության կյանքի ամենատարբեր բնագավառներ և մասնավորապես հասարակական-քաղաքական ոլորտ՝ ԶԼՄ-ները նպաստում են հասարակության անդամների քաղաքական գիտակցության ձևավորմանը և*

---

[6] **Веденеев Ю. А.** *Новое избирательное право. Выборы и референдумы, Екатеринбург, 1998, с. 16.*

[7] **Игнатенко В. В., Штурнев А. Е.** *Словарь по избирательному праву, Иркутск, 1999, с. 145.*

[8] **Веденеев Ю. А.** *Средства массовой информации и избирательный процесс (Журнал о выборах, 2001, N 2, с. 37).*

*ազդեցություն ունենում նրանց քաղաքական կողմնորոշման վրա: Հասարակության մեջ ընդունված և լայն ճանաչում գտած՝ «այն ամենը, ինչ մենք գիտենք ընտրությունների մասին, մեզ հայտնի է ԶԼՄ-ների միջոցով» պատկերացման առումով բնութագրական է ԶԼՄ գործունեության ուղղությունը որոշելու, ընտրությունների լուսաբանման գործընթացը կազմակերպելու և հանրությանը հավաստի ու արժանահավատ ներկայացնելու համար, որը կազմակերպահրավական տեսանկյունից բավական բարդ գործընթաց է հատկապես ընտրությունների նախընտրական փուլի լուսաբանման ընթացքում:*

*Քարոզչական պետք է համարել այն տեղեկատվությունը, որն ուղղակի կոչ է անում քվեարկելու որևէ թեկնածուի, քաղաքական կուսակցության, ընտրական դաշինքի օգտին կամ դեմ (նպատակը ընտրողներին քվեարկելու դրդելն է): Այսինքն՝ քարոզչական է համարվում քաղաքական կուսակցությունների, ընտրական դաշինքների, թեկնածուների վերաբերյալ դրական կամ բացասական բնույթի տեղեկատվության տարածմանը նպատակաուղղված անընդմեջ գործունեությունը, որն ի սկզբանե հավաստի չէ, և որը վերաբերում է ընտրություններին և ընտրական գործընթացի մասնակիցներին, տրամադրվում է տեղեկատվական հատուկ հնարքների օգտագործմամբ, որպիսին կարող է լինել տեղեկատվության և մեկնաբանության՝ փաստերի և ենթադրությունների խառը համադրմամբ տեղեկատվությունը[9]: Եթե իրավակիրառողական մարմինը (ընտրական հանձնաժողովը) նախընտրական քարոզչության կանոնների խախտմամբ տարածված նյութը կհամարի քարոզչական, ապա իրավունք ունի դիմելու դատարան՝ իրավախախտում կատարած անձանց պատասխանատվության ենթարկելու համար: Ամենակարևորը, պետք է պարզել՝ արդյո՞ք քարոզչական է այն գործունեությունը, որի նպատակն է դրդել կամ շահագրգռել ընտրողներին քվեարկելու քաղաքացու օգտին մինչև նրա թեկնածու առաջադրվելը:*

*Չի բավարարում և առկախ է մնում այն հանգամանքը, որ «նախընտրական քարոզչություն» հասկացության վերաբերյալ օրենսդիրը հստակ և որոշակի սահմանում չի տալիս:*

*ՀՀ ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածով նախընտրական քարոզչությունը ԶԼՄ-ների միջոցով սահմանված է որպես Հանրա- յին ռադիոյի և Հանրային հեռուստատեսության լրատվական հաղորդումներում թեկնածուների, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների դաշինքների նախընտրական քարոզարշավի վերաբերյալ անկողմնակալ և գնահատականներից զերծ տեղեկատվություն և այլն[10]: Նման օրենսդրական ձևակերպումը հստակ և պարզորոշ չէ: Սահմանումից կարելի է ենթադրել, որ նախընտրական քարոզչությունը տեղեկատվություն է որոշակի իրավական*

---

[9] *Տե՛ս* **Большаков С. В., Казьмин В. И., Гришина М. В., Бундарина Н. А.** *Средства массовой информации и выборы, М., 2007, с. 2.*

[10] *ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդվ. 19, կ. 3:*

*կարգավիճակ ունեցող սուբյեկտների վերաբերյալ, սակայն չի հասկացվում, թե որ գործունեությունն է, որ կարող է ընտրողին պարտավորեցնել կամ կոչ անել քվեարկելու այս կամ այն թեկնածուի օգտին: Եթե փորձենք վերլուծել զանգվածային լրատվամիջոցներով նախընտրական քարոզչության օրենսդրական ձևակերպումը, ապա այն կարելի է հասկանալ որպես զանգվածային լրատվամիջոցներով իրականացվող քաղաքացիների, ընտրական միավորումների, ընտրական դաշինքների, պատգամավորական թեկնածուների և ընտրական գործընթացների մյուս մասնակիցների՝ օրենքով սահմանված կարգով գործունեության նախապատրաստման և տարածման վերաբերյալ տեղեկատվություն, որի նպատակն է դրդել և կոչ անել ընտրողներին մասնակցելու և քվեարկելու իրենց նախընտրած թեկնածուների և կուսակցությունների օգտին:*

*Նույնքան էլ հստակ չէ նախընտրական քարոզչություն հասկացությունը՝ ըստ «Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների՝ հանրաքվեին մասնակցելու իրավունքի և ընտրական իրավունքների հիմնական երաշխիքների մասին» օրենքի դրույթների, որոնց համաձայն, նախընտրական քարոզչություն է համարվում այն գործունեությունը, որն իրականացվում է ընտրական քարոզարշավի փուլում, և նպատակ ունի կոչ անել ընտրողներին՝ քվեարկելու թեկնածուի օգտին կողմ կամ դեմ կամ էլ բոլոր թեկնածուների դեմ[11]: Կարելի է առարկել այն իմաստով, որ քարոզչական է այն գործունեությունը, որն ուղղված է ընտրողների գիտակցության ուղղորդմանը՝ որոշակի անձանց, որպես թեկնածուներ ընտրություններում առաջադրվելու, և այդ անձանց մասին ընտրողներին դրական կամ բացասական կարծիք ներկայացնելը:*

*ՀՀ ընտրական օրենսգիրքը հստակ սահմանել է նախընտրական քարոզարշավի կազմակերպման և իրացման ժամկետները, որոնցից դուրս ամեն մի տեղեկատվություն կհամարվի քարոզչական: Այսուհանդերձ, նախընտրական քարոզչության համար Ընտրական օրենսգրքով նախատեսված են որոշակի սահմանափակումներ: Առաջնահերթ սահմանափակումներ են սահմանված ժամանակի առումով: Համաձայն ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է թեկնածուների, կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 7-րդ օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ: Այդ շրջանում քարոզչությունը ստորև անվանվում է նախընտրական քարոզչություն: Քվեարկության և դրան նախորդող օրը քարոզչությունն արգելվում է[12]:*

*Համեմատական կարգով նշենք, որ այլ է քարոզչության մեկնարկի և գրանցման կարգը Ռուսաստանի Դաշնությունում. այդ մասին նշված է «Ռուսաստանի*

---

*[11] Федеральный закон об основных гарантиях избирательных прав и право на участие в референдуме граждан Российской Федерации, статья 4, п. 2.*

*[12] Տե՛ս ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդվ. 18, կ.1:*

Դաշնության Դաշնային ժողովի՝ Պետական Դումայի պատգամավորների ընտրությունների մասին» օրենքի 57-րդ հոդվածում. «նախընտրական քարոզչության գործընթացը սկսվում է համապատասխան ընտրական հանձնաժողովում թեկնածուների ցուցակի գրանցվելու օրվանից»[13]:

Եթե գործունեությունն իրականացվում է մինչև քաղաքացու թեկնածու առաջադրվելը և, հետևաբար, մինչև ընտրական հիմնադրամի ստեղծումը, ինչպես նաև պայմանով, որ այդ գործունեությունն իրականացվել է ֆինանսական ծախսերով, ապա համապատասխան ընտրություններում թեկնածուի կամ այլ անձանց նկատմամբ օրենսդրությամբ սահմանված ընտրությունների և հանրաքվեների, նախընտրական քարոզարշավի անցկացման կարգի և պայմանների խախտման դեպքում կարող են կիրառվել օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցներ՝ ընդհուպ պետահիրավական պատասխանատվություն, որն արտահայտվում է գրանցումը մերժելու կամ գրանցումը չեղյալ հայտարարելու ձևով:

Սակայն եթե քաղաքացու գործողություններում վերոնշյալ ուղղվածությունը հստակ արտահայտված չէ, ապա ընտրական գործընթացում նման գործունեությունը, որի հետևանքով հասարակության մեջ քաղաքացու մասին որոշակի կարծիք է ձևավորվել, անգամ եթե հետագայում այդ քաղաքացին ընդգրկվի թեկնածուների ցուցակում, չի կարող համարվել նախընտրական քարոզչություն, քանի որ տեղի է ունեցել քարոզչության փուլից դուրս:

Երկրորդ կարևոր հարցը, որն առնչվում է նախընտրական քարոզարշավին՝բացի օրենքով նախատեսված ժամկետների սահմանափակումներից, ՁԼՄ գործունեության սահմանափակումները և արգելքներն են, որոնք բխում են հենց քարոզչություն իրականացնելու գործառույթներից: Այսպես, ժողովրդավարական երկրների ընտրական գործընթացների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՁԼՄ-ները իրենց անունից չեն կարող իրականացնել քարոզչություն: Որոշ երկրներում նույնիսկ օրենքով սահմանված կարգով նախատեսված են քարոզչական գործունեության սահմանափակումներ: ՀՀ ընտրական օրենսգրքի 22-րդ հոդվածով, նույն կերպ «Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի՝ Պետական դումայի պատգամավորների ընտրությունների մասին»[14] օրենքի 64-րդ հոդվածով պարտադիր կարգով սահմանված են քարոզչական գործունեությանն ուղղված արգելքները: Նմանատիպ արգելքների սահմանումը պայմանավորված է հասարակության մեջ գոյություն ունեցող մի շարք հանգամանքների առկայությամբ: Այսպես, 1998 թվականին առաջին անգամ ՌԴ ընտրությունների ընթացքում երեք լրատվամիջոցների ղեկավարներ, որոնք թույլ էին տվել ընտրական օրենսգրքի խախտումներ (մասնավորապես՝ ընտրություններին նախորդող օրը տպագրել էին քարոզչական

---

[13] Տե՛ս Закон РФ "О выборах депутатов Государственной думы Федерального собрания Российский федерации ", статья 57, 20 ноября 2002 г.

[14] Федеральный закон о статусе депутата Совета Федерации и статусе депутата Государственной Думы Федерального Собрания Российской Федерации, 8.V.1994, с. 18.

նյութեր), ենթարկվել էին վարչական պատասխանատվության: Ընդ որում, երկու թերթերի գլխավոր խմբագիրները՝ Կուզնեցովը և Կուչերը, օրենքով սահմանված կարգով ենթարկվեցին վարչական տուգանքի, մինչդեռ երրորդ թերթի գլխավոր խմբագիրը՝ Չիկինը, որը միևնույն ժամանակ Պետական դումայի պատգամավոր էր, օգտվեց այն ժամանակ գործող «Ռուսաստանի Դաշնության Պետական դումայի պատգամավորի կարգավիճակի մասին» օրենքով երաշխավորված պատգամավորական անձեռնմխելիության իրավունքից, որը հիմք էր նրան պատասխանատվությունից ազատվելու համար: Նշված օրինակը վկայում է, որ օրենքով թեև սահմանվում են ԶԼՄ գործունեության համար հավասար պայմաններ և երաշխիքներ, սակայն ոչ բոլոր լրատվամիջոցներն են ընկնում օրենքի գործողության տակ և ոչ բոլոր լրատվամիջոցներն են օժտված հավասար իրավունքներով և պարտականություններով: Հետևաբար նմանատիպ իրավիճակներում էլ հայտնաբերվում են «նախընտրական քարոզչության իրավունքի չարաշահումները», խախտվում են ընտրությունների հրապարակայնության, ինչպես նաև՝ թեկնածուների հավասարության սկզբունքը: Ինչպես արդարացի նշում է Մ. Ա. Ֆեդոտովը, «նախընտրական քարոզչության իրավունքի չարաշահման» միջոցով փորձ է արվում «նախընտրական պայքարը վարել քաղաքական մշակույթի շրջանակում»[15]: ՌԴ քաղաքացիների՝ հանրաքվեին մասնակցելու իրավունքի և ընտրական իրավունքների հիմնական երաշխիքների մասին դաշնային օրենքի 45-րդ հոդվածի համաձայն՝ արգելվում է քարոզչության չարաշահման իրավունքը. քարոզչության ընթացքում անթույլատրելի են զանգվածային տեղեկատվության ազատության չարաշահումները, մասնավորապես սոցիալական, ռասայական, ազգային, կրոնական թշնամանք և ատելություն հրահրող քարոզչությունը, իշխանության զավթելուն ուղղված կոչերը, սահմանադրական կարգը բռնությամբ փոխելը և տարածքային ամբողջականության դեմ ոտնձգությունը, պատերազմի քարոզչությունը և դաշնային այլ օրենքներով արգելված զանգվածային տեղեկատվության ազատության չարաշահման այլ ձևեր[16]:

Այժմ ներկայացնենք ՀՀ ընտրական ոլորտի բարեփոխումները՝ հիմք ընդունելով փոփոխված ՀՀ ընտրական օրենսգիրքը (26.05. 2011 թ.) և դրանում ամրագրված դրույթներն ու ԶԼՄ գործունեությանն ուղղված երաշխիքները: Մի կողմից ԶԼՄ-ները հանդես են գալիս որպես բացառապես տեղեկատվական ծառայություններ՝ արտադրողներ, մյուս կողմից՝ որպես ժողովրդավարության ինքնուրույն և լիարժեք ինստիտուտ: Ընդ որում, իրավական կարգավորման նպատակները, անկախ ընտրական գործընթացներից, առավել ընդգրկուն են և կոչված են ապահովելու ԶԼՄ-ի՝ որպես ժողովրդավարական ինստիտուտի գործունեության համար առավել բարենպաստ պայմաններ, իսկ մյուս կողմից՝ անհատի, պետության և հասարակության,

---

[15] **Федотов М. А.** *Власть, зеркало или служанка СМИ в отсутствие Ариадны, М., 1998, с. 121.*

[16] *Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների՝ հանրաքվեին մասնակցելու իրավունքի և ընտրական իրավունքների հիմնական երաշխիքների մասին դաշնային օրենք, 5.IX.1997, հոդվ. 45:*

*ֆիզիկական և իրավաբանական անձանց շահերի պաշտպանությունը*[17]*: Այս երկու առանձնահատկություններն էլ փոխկապված և միահյուսված են: Ակնհայտ է, որ այդ նպատակները ոչ միայն չեն հակասում միմյանց, այլև ընդհակառակը՝ լիովին համապատասխանում են ընտրությունների մասին օրենսդրական այն սկզբունքներին, որոնցով լրատվամիջոցների մասին օրենսդրական դրույթները լրացվում են ընտրությունների ընթացքում ընտրական գործընթացի հնարավոր սուբյեկտների հավասարության պահանջի շրջանակում: Մի կողմից, քաղաքական հարաբերությունների սուբյեկտների կողմից ԶԼՄ գործառույթը նշանակում է տպագիր և էլեկտրոնային ԶԼՄ-ների ներթափանցում քաղաքական գործընթաց, մյուս կողմից՝ քաղաքական հարաբերությունների սուբյեկտների կողմից ԶԼՄ մասնակցությունը քաղաքական գործընթացին դիտվում է որպես վերջնական արդյունք*[18]*: Ի վերջո, ԶԼՄ գործառույթը ընտրական քարոզարշավներում ընդունում է տարբեր ձևեր, որոնք կարելի է ենթարկել դասակարգման՝ որպես հիմք ընդունելով սուբյեկտները, որոնք են՝*

*- ընտրական հանձնաժողովները.*

*- տեղական տարածաշրջանային մարմինները.*

*- թեկնածուները, ընտրական միավորումները և դաշինքները:*

*Ինչ վերաբերում է ԶԼՄ-ների կիրառման ձևերին, դրանց շարքին են դասվում՝*

*- իրազեկվածությունը (հրապարակում և ազդարարում).*

*- քարոզչության իրականացման համար տպագիր մակերեսների տրամադրումը (վճարովի և անվճար):*

*Փորձենք ներկայացնել և վերլուծել ընտրական հանձնաժողովների իրավական կարգավիճակը՝ հիմք ընդունելով Ընտրական օրենսգրքի դրույթները: Այսպես, Հայաստանում վերջերս հրապարակվեց ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) դիտորդական առաքելության համազեկուցողների առաջին միջանկյալ զեկույցը, որում վերջիններս անդրադարձել էին 2012 թ. խորհրդարանական ընտրությունների նախապատրաստմանը՝ ողջունելով այն հանգամանքը, որ ընտրությունների կազմակերպումն իրականացվելու է մասնագիտական ընտրական վարչարարության միջոցով, սակայն միևնույն ժամանակ նշելով, որ այն մեծ պատասխանատվություն է դնելու ՀՀ իշխանությունների վրա, որպեսզի ընտրական հանձնաժողովների անդամները կարողանան վայելել հանրության և ընտրությանը մասնակցող քաղաքացիների վստահությունը: Ընդհանուր առմամբ, ԵԱՀԿ ԺՀՄԻԳ համազեկուցողների գնատականը դրական էր, համաձայն որի՝ 2011 թ. մայիսին Ընտրական օրենսգրքում տեղ գտած փոփոխությունների շնորհիվ բարելավվել է ժողովրդավարական ընտրությունների համակարգը, սակայն դեռևս կան ոլորտներ,*

---

[17] **Федотов М. А.** *Правовые основы журналистики, М, 2001, с. 8.*

[18] **Синюшкин В.** *Технология работы со СМИ в политических кампаниях. http://www.vusnet.ru/biblio/archive/sinushkin_technrabotysosmi*

որտեղ կարելի է բարելավումներ անել[19]: Այս առումով ուշագրավ է ԿՀՀ հանձնաժողովի նախագահ Տ. Մուկուչյանի տեսակետը, որի համաձայն, ընտրական հանձնաժողովների ձևավորման՝ մասնավորապես Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների ձևավորման համար օրենսգրքով սահմանվել են մի շարք դրույթներ և մոտեցումներ, որոնց հիմքում դրված է հենց պրոֆեսիոնալիզմի սկզբունքը, որից սկիզբ է առնում հանձնաժողովի ամբողջ գործունեությունը: Ընտրական օրենսգիրքը սահմանել է նաև երաշխիքներ, որոնց հիման վրա ընտրական հանձնաժողովները գործում են լիարժեք՝ անկախության սկզբունքին համապատասխան: Այդ երաշխիքներով ապահովվում է ընտրական հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի անկախությունը. նրանք ենթարկվում են բացառապես օրենքին և չեն ներկայացնում իրենց նշանակողին: Մասնագիտացված հանձնաժողովների ձևավորումն էական ազդեցություն կարող է ունենալ ընտրությունների կազմակերպման և անցկացման գործընթացների վրա, որովհետև հանձնաժողովի անդամներն արդեն ոչ թե կուսակցական պատկանելության սկզբունքով ընտրված անձինք են, այլ մասնագետներ, որոնց գործունեության հիմքում պրոֆեսիոնալիզմն է: Զեկույցում նշված էր նաև, որ ՀՀ ընտրողները, որոնց թիվը կազմում է մոտ 2,5 մլն, հնարավորություն կունենան ստուգելու իրենց անունների առկայությունը ինչպես ընտրացուցակներում, այնպես էլ համացանցի միջոցով: Այդուհանդերձ, մի քանի համազեկուցողներ անհանգստություն են հայտնել ընտրացուցակների որակի վերաբերյալ:

Մտավախություն է առաջացնում նաև հետևյալ հարցը՝ արդյո՞ք ընտրությունների ընթացքում կամ ընտրություններից հետո հանձնաժողովները ընտրությունները չեն կեղծի: Այս առումով Ընտրական օրենսգիրքը նույնպես սահմանել է երաշխիքներ՝ հրապարակայնությունը և թափանցիկությունը: Հանձնաժողովների բոլոր նիստերը հրապարակային են, այսինքն՝ յուրաքանչյուր հանձնաժողովի գործունեության հիմքում ընկած է հրապարակայնությունը, որի գործոնի լիարժեք ապահովումը հենց այն հիմքն է, որը պետք է իրավունք տա յուրաքանչյուրին անձամբ տեսնելու և ընկալելու բոլոր գործընթացները: Թեև ընտրական հանձնաժողովները պրոֆեսիոնալ են և անկախ, այդուհանդերձ, օրենքով նրանց նկատմամբ սահմանված է պահանջ, որով հանձնաժողովների անդամներին կըտրականապես արգելվում է զբաղվել քաղաքական գործունեությամբ, նրանք իրավունք չունեն հարելու որևէ քաղաքական կուսակցության և պետք է գոյացնեն բացառապես անկախ հանձնաժողովներ:

Ըստ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ համազեկուցողների դիտարկման՝ ՀՀ ընտրություններից առաջ կտրուկ փոփոխվել է քաղաքական միջավայրը, ինչի հետևանքով առաջիկա ընտրությունները, ընդհանուր առմամբ, կլինեն իրապես մրցակցային: Այնուհետև

[19] Տե՛ս www.aravot.am/ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ առաքելությունը հրապարակել է առաջին միջանկյալ զեկույցը, 6.IV.2012:

հրապարակվեց ԵԱՀԿ ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության երկրորդ միջանկյալ զեկույցը, որում, սակայն, բացասական գնահատական էր տրված ՀՀ ընտրություններից առաջ ստեղծված իրավիճակին: Նշվում էին օրենսգրքի որոշ խախտումներ, մասնավորապես որոշ կուսակցությունների քարոզչական նյութերի տեղադրումը մունիցիպալ նշանակության շենքերում և ընտրական տեղամասերում, ինչպես նաև քարոզչության իրականացումը կրթական հաստատություններում: Բացասական գնահատականների հետ մեկտեղ հարկ է նշել, որ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի զեկույցը անդրադարձել էր նաև լրատվամիջոցների իրականացրած ընտրությունների քարոզարշավի լուսաբանմանը՝ դրական գնահատելով այս վերջինը: Ըստ դիտորդների՝ ապրիլի 8-ից հետո, սակայն, այդ միտումը նվազել է, և լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում են հայտնվել բոլոր կուսակցություններն ու մեկ դաշինքը: Զեկուցողների գնահատմամբ, հանրային հեռուստաընկերությունը կատարել է իր պարտականությունը՝ տրամադրելով բոլոր մասնակիցներին ազատ եթերաժամ[20]:

Ինչ վերաբերում է ԶԼՄ պատասխանատվության հարցին, այս առումով պետք է նկատել, որ առանձնակի ուշադրություն է պահանջում տեղեկատվական պատերազմների և «սև փիարի» խնդիրը, որոնք անմիջականորեն առնչվում են ընտրական գործընթացներին: ՀՀ լրատվամիջոցների վարչական պատասխանատվություն նախատեսված է այն դեպքում, երբ նախընտրական քարոզչության համար օրենքով սահմանված ժամանակահատվածում ԶԼՄ-ներով տարածվել է թեկնածուների և կուսակցությունների նախընտրական քարոզչության վերաբերյալ ակնհայտ կողմնակալ տեղեկատվություն, որն առաջացնում է տուգանքի նշանակում լրատվական գործունեություն իրականացնողի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկից մինչև ութհարյուրապատիկի չափով[21]: Մինչդեռ, ըստ ՌԴ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի դրույթների՝ ԶԼՄ-ները ենթարկվում են պատասխանատվության այս կամ այն թեկնածուի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակով տարածված տեղեկատվության համար: Ընդ որում, ՌԴ վարչական օրենսդրությունը բարդացնում է ԶԼՄ-ների վիճակը՝ սահմանելով իր դրույթներում, որ թեկնածուներին հնարավորություն չտալը՝ պաշտպանելու իրենց պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը՝ հրապարակայնորեն հերքելու միջոցով, առաջացնում է վարչական պատասխանատվություն՝ պաշտոնատար անձանց համար՝ նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև երեսնապատիկը, իրավաբանական անձանց համար՝ նվազագույն աշխատա

[20] Տե՛ս www.armtown.com ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդները մատնանշում են քարոզարշավի ընթացքում եղած ծեծկռտուքի դեպքերը, 27.IV.2012:

[21] Տե՛ս Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք, ընդ. 6.XII.1985, հոդվ. 40.7:

*վարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկը[22]: Շատ թեկնածուներ են օգտվում իրենց ընձեռած այդ հնարավորությունից, և իրենք իրենց արդարացնելով՝ այդուհանդերձ, «սներես են անում» ընդդիմադրին: Դրանով է, որ սկիզբ է դրվում տեղեկատվական պատերազմին, որի հիմքում ընկած է «սև փիարը»:*

*Այսպիսով, խորհրդարանական ընտրությունների ազատության, արդարացիության և ժողովրդավարության ապահովումը կարևոր և պատասխանատու գործընթաց է և պարտավորություններ է առաջացնում ոչ միայն ՀՀ իշխանությունների, այլև լրատվամիջոցների համար: Մասնավորապես անհերքելի է ընտրական գործընթացներում լրատվամիջոցների ունեցած կարևոր դերը:*

## ПРАВОВОЙ СТАТУС И РОЛЬ СМИ В ПРЕДВЫБОРНОЙ КАМПАНИИ

ХАРАТЯН Л. А.

**Резюме**

Масс Медиа играют существенную роль в современном обществе, в особенности в отношениях между личностью и обществом, государством и обществом в целом.

Имея непосредственное отношение к различным сферам жизни, в частности, к политической, СМИ выступают в качестве своеобразного посредника между членами общества и государства, освещая, с одной стороны, деятельность государственных структур, а с другой – озвучивая насущные проблемы общества. Государственные, коммерческие и некоммерческие СМИ должны руководствоваться в своей деятельности единым принципом: истинная демократия невозможна без независимых СМИ.

[22] *Տե՛ս Кодекс об административных правонарушениях РФ, статья 5.13.*